## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆԱԴԱՅԻ ԹԵՄԻ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1986 թվականի մայիսի 30-ին և 31-ին Մոնրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում գումարվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կանադայի թեմի երրորդ պատգամավորական ժողովը:

1983-ին Կանադահայ թեմը ձևավորվեց որպես առանձին թեմ, և անցնող երեք տարիներին Կանադայի թեմի առաջնորդ Վազգեն եպս. Քեշիշյանը, թեմական խորհուրդը և վարչական մարմինները հաջողությամբ լուծեցին իրենց առջև ծառացած կազմակերպչական և այլ խնդիրները: Դժվարությունները շատ էին, բայց աշխատանքային վճռականությունն ու նվիրվածությունը հաղթահարեցին դրանք՝ ստեղծելով համեմատաբար կուռ վարչական կառույց՝ կանոնակարգապահական ուրույն դիմագծով:

Եվ ահա երրորդ թեմական ժողովի պատգամավորները հավաքվել են՝ վաստակած մարդու գոհունակությամբ ի մի բերելու կատարված աշխատանքն ու նրա արդյունքները, անկեղծ խոսակցությամբ արտահայտվելու վրիպումների մասին և նոր վճռականությամբ ու հույսերով կերտելու վաղվա ծրագրերը:

Մայիսի 30-ի երեկոյան տեղի ունեցավ առաջին նիստը: Բացման խոսքով հանդես եկավ և ներկաներին ողջունեց սրբազան հայրը: Ապա հաստատվեց նորընտիր պատգամավորների ցանկը, ընտրվեց դիվանը, հուսկ հետո ընթերցվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի մայիսի 27-ին ժողովին հղած պատգամը, ուր Վեհափառ Հայրապետն ի մասնավորի ասում էր.

«Անհունորեն ուրախ եմ, որ համեմատաբար կարճ ժամանակի ընթացքին, Ձեր թեմը իր օրինական ամբակուռ կառույցը ունեցավ և սկզբնավորվեցավ եկեղեցաշեն գործունեության խոստումնալից շրջան մը, շնորհիվ նվիրյալ ու եռանդաշատ աշխատանքին թեմիդ բարեջան առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոսի, սերտ ու համերաշխ գործունեությամբը Պատվարժան Թեմական Խորհուրդիդ և եկեղեցական հաստատություններու վարչական մարմիններուն:

Դուք Մեր մխիթարությունն եք, Դուք Մեր հույսն եք, Դուք Մեր հպարտանքն եք: Վարձքերնիդ կատար»:

Ապա որդեգրվեց աշխատանքային օրա-

կարգ և նշանակվեց ժողովավարական հանձնախումբ:

Երկրորդ նիստը տեղի ունեցավ մայիսի 31-ին: Ընթերցվեց կանոնական աշխատանքային հանձնաժողովների թեկնածուների ցանկը: Հետո առաջնորդ սրբազան հայրը տվեց իր պատգամը, ուր ի միջի այլոց ասաց.

«Հայոց Եկեղեցին տասնյոթ դարերու հաստատություն մըն է, որ անժխտելիորեն հայ ժողովուրդին կյանքի մեջ մեծագույն դրական և փրկարար դերը ունեցած է, իսկ այսօր առավել քան երբևիցե ունի: Հայ Եկեղեցվո ապատամտության ոգին պետք չէ շփոթենք քմահաճույքներու կամակատարությանց հետ. մեր Եկեղեցին ունի իր կանոններն ու օրենքները՝ հաստատված տասնյոթ դարերու ընթացքին, և անոնց կարգապահությունն է, որ ստիպած է դիմակալել՝ դարերու և մարդոց բոլոր ոտնձգություններր և կանգուն մնացած է:

Այսօր այդ կանոնաց և օրենքներու կարգապահության ավանդապահությունը մեկի փոխանցված է, որպեսզի մենք ալ նույն նախանձախնդրությամբ կայն անեղծ ու անարատ պահենք վաղվան համար:

...Դժվար է մեր առաքելությունը, որն է՝ նոր հայը, կանադահայը կերտել:

Եկեղեցին պետք է ձույլատունը ըլլա այլատեսակ հայերու միասնականության, որպեսզի մեր մյուս ազգային հաստատությունները կարենան ապրիլ: Մեր Եկեղեցին էապես ազգային Եկեղեցի է.... որովհետև իր մեջ կպարփակե ամբողջ ազգը... ան հայությունն իսկ է:

...Մեր ժողովուրդին ծառայել յուրաքանչյուր գիտակից հայ անհատի պարտականությունն է. իսկ Հայ Եկեղեցվո միջոցավ ծառայելը նվիրական գործ մըն »:

Ապա սրբազան հայրը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր կորակիգ եղան նրան՝ իր պատասխանատու և դժվար աշխատանքի մեջ:

Ապա ժողովը անցավ թեմական խորհրդի ընտրություններին:

Երեկոյան երրորդ նիստում հայտարարվեց ընտրությունների արդյունքը և առաջնորդ սրբազան հոր աղոթքով պատգամավորական ժողովը ավարտեց իր աշխատանքները:

ԹՂԹԱԿԻՑ